ձախ ափի վերայ տարածուած փշալից ցախուտն և անցանք սրընթաց Շեռեան, մէկ ժամէն հասանք Աբաս, յորմէ ևս մի քիլոմէթրի չափ հարաւ քայլելով պատահեցանք մի գերեզմանատան, որ ունէր հսկայ տապանաքարեր, որք խառն ի խուռն ձգուած էին. ուշադրութիւն դարձնելով հասու եղայ որ սա մի ընդարձակ գերեզմանատուն էր և թէ քուրդք տակաւ առ տակաւ սպառած էին տապանաքարերն, մնացած էին միայն հսկայ քարինք, զորս անկարող էին տանել քրդեր իւրեանց փոքր սայլերով։ Իսկ հայեր աշխատած են քրդի աւերման պակասն լրացնել, իւրեանց ուժեղ գոմէշներով քանի քանի խաչքարինք բերած Խաստուրայ ջրաղացներու մեծ առուներու վերայ հաստատած են, որք կը գործածուին իբրև կամուրջ. կը հաւատայք, երբ ասեմ ձեզ թէ մի քարի վերայէն մի սայլ կարող էր անց և դարձ առնել։

Դեռ կը գտնուին նոյն հանգստարանին մէջ աւելի հսկայ քարեր և կը տեսնուին հազիւ նշմարելի տապանագրերու հետքեր, որք մաշուած են այն պատճառով, որ հովիւք շարունակ նոցա վերան աղ կը լցնեն, ոչխարներ կը լիզեն [1], որով ով գիտէ, քանի դարեր այս ընթացքի մէջ մաշուած են։

---

1. Ամեն գիւղացի իւր դուռն դրուած ունի հարթ քարեր, որոյ վերան ամեն առաւօտ եւ երեկոյ աղ կը ցանէ եւ կամ սեղան տախտակի վերան աղ ցանելով դուռն կը դնէ. տեսնելու է թէ գիւղացւոյն հօտը կամ անդեան որպէս արագ քայլերով կը դիմէ դէպի այդ քարերն եւ ինչ ախորժանօք կը լիզէ, եթէ հովիւը կամ տան տիկինը ժամանակին աղը լցած չլինի, ինչ մեծ ղժուարութիւն կը կրէ, անասունք սորա շուրջն կը պատեն, կը սեղմեն չորս կողմից որպէս զի նորա բուից աղը յափշտակեն. նա շատ մեծ ղժուարութեամբ ինք զինք կը կորզէ, ելք մն կը գտնէ. հետու մն այլ քարի վերան կը ցանէ, երբ անասունք